

ԳԱՆՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆԹԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱՌԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTRÉAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ 25 Ապրիլ 2021

212

DIMANCHE, 25 Avril 2021

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ
DIMANCHE ROUGE

Աստուածաշունչի Ընթերցումներ
ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

13. 16- 43

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԵՆ
5. 1- 14

ՅԻՍՈՒՍ ԹՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԵՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ
5. 19- 30

Les lectures de la Bible d'aujourd'hui :

1 PIERRE 5. 1- 14

JEAN 5. 19- 30

Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ
ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ՔՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant: Prêtre Paroissial
RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան ժամերգութիւն ժամը-
Office Matines à

9:30-ին
9h30

Ս. Պատարագ- ուղիղ սփռում ժամը-
La Sainte Messe – En direct à

10:30-ին
10h30

Հոգեհանգիստ - ուղիղ սփռում ժամը-
Office de Requieme – En direct à

12:30-ին
12h30

DIACRES – ACOLYTES
ORGANIST: VAHRAM SARGSYAN
Choeur Gomidas

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

1-ԻՆ ՆԱՄԱԿԵՆ

5. 1- 14

Ձեր մէջ եղող երեցներուն կ'աղաչեմ, ես ալ նոյնպէս երեց ըլլալովս, Քրիստոսին չարչարանքներուն վկայ եւ մասնակից հանդերձեալ փառքին որ պիտի յայտնուի, Աստուծոյ հօտը որ ձեր մէջ է՝ արածեցէք, վերակացու ըլլալով ո՛չ թէ ակամայ՝ հապա կամաւ, ո՛չ թէ անարգ շահահախնդրութեամբ՝ հապա յօժարութեամբ, Ո՛չ թէ վիճակներուն վրայ տիրելով՝ հապա հօտին օրինակ ըլլալով. եւ Հովուապետին երեւցած ատենը փառքի անթառամ պսակը պիտի ընդունիք:

Նմանապէս դո՛ւք, երիտասարդներ, հնազանդ եղէք ծերերուն: Ամենքդ իրարու հնազանդ ըլլալով՝ խոնարհութիւն հագէք. վասն զի Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց խոնարհներուն շնորհք կու տայ: Ուրեմն Աստուծոյ հօր ձեռքին տակ խոնարհեցէ՛ք, որպէս զի ձեզ ժամանակին բարձրացնէ: Ձեր ամէն հոգը անոր վրայ ձգեցէ՛ք, վասն զի անիկա ձեզի համար կը հոգայ:

Արթո՛ւն կեցէք, հսկեցէ՛ք, վասն զի ձեր հակառակորդը, Սատանան՝ մոռնող առիծի պէս կը պտըտի ու կը փնտռէ թէ ո՛վ կլլէ: Անոր դէմ կե-ցէ՛ք հաւատքով հաստատուած, գիտնալով որ ձեր եղբայրներն ալ աշխարհի մէջ նոյն չարչարանքները կը կրեն:

Եւ բոլոր շնորհներու Աստուածը, որ մեզ իր յաւիտեական փառքին կանչեց Քրիստոս Յիսուսին միջոցով, քիչ մը ատեն նեղութիւն կրելէ ետքը, ինք ձեզ թող կատարեալ ընէ՛, հաստատէ՛, զօրացնէ՛ ու հիմնէ՛: Իրեն փառք եւ զօրութիւն յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Սիղուանոս հաւատարիմ եղբօր ձեռքով, ինչպէս ես կը կարծեմ, համառօտ մը ձեզի գրեցի, յորդորելով ու վկայելով թէ այս է Աստուծոյ ճշմարիտ շնորհքը, որուն մէջ հաստատ կեցեր էք: Բարեւ կ'ընէ ձեզի Բաբելոնի մէջ եղած եկեղեցին, որ ձեզի հետ ընտրուած է ու իմ որդիս Մարկոսն ալ: Բարեւ տուէք իրարու սիրոյ համբոյրով. խաղաղութիւն ձեր ամենուն հետ, որ Քրիստոս Յիսուսին մէջ էք: Ամէն:

ՎԻՇԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՅԱՆՈՒ

5. 19- 30

Իսկ Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, 'Որդին ինքնիրմէ բան մըն ալ չի կրնար ընել, միայն այն՝ ինչ որ Յայրը կ'ընէ. վասն զի ինչ որ անիկա կ'ընէ, նմանապէս Որդին ալ նոյնը կ'ընէ': Քանզի Յայրը կը սիրէ Որդին եւ ամէն բան կը ցուցնէ անոր՝ ինչ որ ինք կ'ընէ եւ ասոնցմէ ա'լ անլի մեծ գործեր պիտի ցուցնէ անոր, որպէս զի դուք զարմանաք: Վասն զի ինչպէս Յայրը մեռելները կը յարուցանէ ու կը կենդանացնէ, այնպէս ալ Որդին որոնք կ'ուզէ կը կենդանացնէ: Քանզի Յայրը մէ'կը չի դատեր, հապա ամէն դատաստան Որդին տուաւ. Որպէս զի ամենքը պատուեն Որդին, ինչպէս Յայրը կը պատ-ւեն: Ան որ Որդին չի պատուեր, զանիկա դրկող Յայրը չի պատուեր: Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ 'Ան որ իմ խօսքս մտիկ կ'ընէ եւ կը հաւատայ անոր որ զիս դրկեց, յաւիտեական կեանք ունի ու դա-տապարտութեան տակ չիյնար, հապա մահուանէ դէպի կեանք ան-ցած է': Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ ժամանակ պիտի գայ եւ հիմա ալ է, երբ մեռելները պիտի լսեն Աստուծոյ Որդիին ձայնը եւ ա-նոնք որ կը լսեն, պիտի ապրին: Վասն զի ինչպէս Յայրը իր անծին մէջ կեանք ունի, այնպէս ալ Որդին տուաւ, որ իր անծին մէջ կեանք ու-նենայ, եւ դատաստան ընելու իշխանութիւն ալ տուաւ անոր, քանզի անիկա Որդի մարդոյ է: Ասոր վրայ մի՛ զարմանաք. վասն զի ժամա-նակ պիտի գայ՝ երբ բոլոր գերեզմաններուն մէջ եղողները անոր ձայ-նը պիտի լսեն, Ու դուքս պիտի գան: Անոնք որ բարի գործեր են՝ կեանքի յարուբեան համար եւ անոնք որ չար գործեր են՝ դատապարտութեան յարուբեան համար»:

«Ես ինքնիրմէս բան մը չեմ կրնար ընել. ինչպէս կը լսեմ, այնպէս կը դատեմ եւ իմ դատաստանս արդար է, վասն զի ես իմ կամքս չեմ փնտռեր, հապա անոր կամքը որ զիս դրկեց»:

1 PIERRE 5. 1- 14

Je prie les Anciens qui sont parmi vous, moi qui suis Ancien avec eux, et témoin des souffrances de Christ, et participant de la gloire qui doit être révélée, [et je leur dis] : Paissez le Troupeau de Christ qui vous est commis, en prenant garde sur lui, non point par contrainte, mais volontairement; non point pour un gain déshonnête, mais par un principe d'affection. Et non point comme ayant domination sur les héritages [du Seigneur], mais en telle manière que vous soyez pour modèle au Troupeau. Et quand le souverain Pasteur apparaîtra, vous recevrez la couronne incorruptible de gloire.

De même, vous jeunes gens, soyez soumis aux Anciens, et ayant tous de la soumission l'un pour l'autre, soyez parés par-dedans d'humilité, parce que Dieu résiste aux orgueilleux, mais il fait grâce aux humbles.

Humiliez-vous donc sous la puissante main de Dieu, afin qu'il vous élève quand il en sera temps; Lui remettant tout ce qui peut vous inquiéter : car il a soin de vous. Soyez sobres, [et] veillez : car le diable, votre adversaire, tourne autour de vous comme un lion rugissant, cherchant qui il pourra dévorer. Résistez-lui [donc] en [demeurant] fermes dans la foi, sachant que les mêmes souffrances s'accomplissent en la compagnie de vos frères, qui sont dans le monde.

Or le Dieu de toute grâce, qui nous a appelés à sa gloire éternelle en Jésus-Christ, après que vous aurez souffert un peu de temps, vous rende accomplis, vous affermis, vous fortifie, [et] vous établisse. A lui soit la gloire et la force, aux siècles des siècles, Amen!

Je vous ai écrit brièvement par Silvain notre frère, que je crois vous être fidèle, vous déclarant et vous protestant que la grâce de Dieu dans laquelle vous êtes est la véritable. [L'Eglise] qui est à Babylone, élue avec vous, et Marc mon fils, vous saluent. 14Saluez-vous l'un l'autre par un baiser de charité. Que la paix soit à vous tous, qui êtes en Jésus-Christ, Amen!

JEAN 5. 19- 30

Mais Jésus répondit, et leur dit : en vérité, en vérité je vous dis, que le Fils ne peut rien faire de soi-même, sinon qu'il le voie faire au Père : car quelque chose que le Père fasse, le Fils aussi le fait de même. Car le Père aime le Fils, et lui montre toutes les choses qu'il fait; et il lui montrera de plus grandes œuvres que celle-ci, afin que vous en soyez dans l'admiration. Car comme le Père ressuscite les morts et les vivifie, de même aussi le Fils vivifie ceux qu'il veut. Car le Père ne juge personne; mais il a donné tout jugement au Fils; Afin que tous honorent le Fils, comme ils honorent le Père; celui qui n'honore point le Fils, n'honore point le Père qui l'a envoyé.

En vérité, en vérité je vous dis : que celui qui entend ma parole, et croit à celui qui m'a envoyé, a la vie éternelle, et il ne sera point exposé à la condamnation, mais il est passé de la mort à la vie.

En vérité, en vérité je vous dis : que l'heure vient, et elle est même déjà [venue], que les morts entendront la voix du Fils de Dieu, et ceux qui l'auront entendue, vivront. Car comme le Père a la vie en soi même, ainsi il a donné au Fils d'avoir la vie en soi-même. Et il lui a donné le pouvoir de juger parce qu'il est le Fils de l'homme. Ne soyez point étonnés de cela : car l'heure viendra, en laquelle tous ceux qui sont dans les sépulcres entendront sa voix. Et ils sortiront, savoir ceux qui auront bien fait, en

résurrection de vie; et ceux qui auront mal fait, en résurrection de condamnation.


Je ne puis rien faire de moi-même : je juge conformément à ce que j'entends, et mon jugement est juste; car je ne cherche point ma volonté, mais la volonté du Père qui m'a envoyé.



ԲԱՐԵՆՕՍԱԿԱՆ ԱՂՈԹՔ

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ

PRIÈRE D'INTERCESSION ADRESSÉE AUX SAINTS MARTYRS DU GENOCIDE DES ARMÉNIENS



Սուրբերուն պսակազարդող Ջրիստոս, Դուն որ լուսապսակի
կ'արժանացնես Ջու սուրբերուդ եւ կը կատարես երկիւղածութեամբ Զեզ
հաւատացողներուն կամքը եւ սիրով ու քաղցրութեամբ կը նայիս Ջու
արարածներուդ, Սուրբ Աստուածանի բարեխօսութեամբ եւ
աղաչանքներով բոլոր սուրբերուն եւ այն նահատակներուն,
որ 1915 թուականին Հայոց Տեղասպանութեան ընթացքին յանուն
հաւատքի եւ հայրենիքի զոհուեցան,
յսէ՛ մեզի երկինքէն՝ Ջու Սրբարանէդ:
Լսէ՛ մեզի Տէ՛ր եւ ողորմէ՛, ներէ՛, քաւէ՛ եւ թողութիւն պարգեւէ՛
մեր մեղքերուն, արժանի ըլլէ՛ մեզի գոհութեամբ փառաւորել Զեզի,
Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ԱՄԷՆ:

Couronne des saints, Ô Christ, Toi qui couronnes les saints et accomplit la
volonté de ceux qui Te craignent, qui regarde avec amour et tendresse Tes
créatures, dans Ta Sainteté, entends-nous depuis les cieux, par l'intercession de
la Sainte Mère de Dieu et la supplication de tous tes saints et des saints martyrs
tombés à 1915, lors du Génocide des Arméniens
pour la foi et la patrie.

Écoute-nous Seigneur et aie pitié de nous, pardonne,
expie et remets-nous nos péchés.

Rends-nous dignes de Te glorifier, en Te rendant grâce, avec le Fils et avec le
Saint Esprit, maintenant et toujours et dans les siècles des siècles. AMEN.

**ՇԱԲԱԹՈՒԱՅ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ**

Իմ խրատս առե՛ք եւ ոչ թէ արծաթ: Ու ընտիր ոսկիէն աւելի
գիտութիւնը սիրեցե՛ք: Վասն զի իմաստութիւնը գոհարներէն
աղէկ է եւ բոլոր ցանկալի բաները չեն կրնար անոր
հաւասարիլ:
(Առակաց 8.10-11)

Ձեր յանցանքները իրարու խոստովանեցե՛ք ու աղո՛թք ըրե՛ք
իրարու համար, որպէս զի բժշկուի՛ք: Արդարին ջերմեռանդ
աղօթքը շատ ազդեցութիւն ունի:
(Յակոբոս 5.16)

Աստուած Հոգի է եւ իրեն երկրպագողներն ալ պէտք է որ
հոգիով ու ճշմարտութիւնով երկրպագութիւն ընեն»:
(Յովհաննէս 4.24)

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԱԹՈՒԱՆ**

Ապրիլ – Avril

26, Երկուշաբթի – ԻԳ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Lundi 26 – 23ème jour de la période des 50 jours
qui vont jusqu'à la Pentecôte

27, Երեքշաբթի – ԻԴ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Mardi 27 – 24ème jour

28, Չորեքշաբթի – ԻԵ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Mercredi 28 - 25ème jour

29, Հինգշաբթի – ԻԶ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Jeudi 29 – 26ème jour

30, Ուրբաթ – ԻԷ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Vendredi 30 – 27ème jour

Մայիս - Mai

1, Շաբաթ - ԻԸ ՕՐ ՅԻՆԱՆՑ

Samedi 1 – 28ème jour

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

ԿԻՐԱԿԻ, 25 Ապրիլ 2021



Պրն. Աշոտ Ալեմեան,
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրէ իր
սիրեցեալ մօր`

ՍՕՆԻԱ

**ԱՐՐԱՅԱՍՏԵԱՆ ԱԼԵՄԵԱՆԻ
(SONIA APRAHAMIAN ALEMIAN)**

մահուան 40-ի յիշատակին:



Տ. եւ Տիկ. Արա եւ Սալբի Սամսոն Թորոսեան
եւ ընտանիք,
Տ. եւ Տիկ. Նովա եւ Սիլտա Թորոսեան եւ ընտանիք,
Տիկ. Ռիթա Թորոսեան եւ ընտանիք,
Սիլվա Թորոսեան,
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց
սիրեցեալ մօր եւ մեծ մօր`

**ԷԼԻԶԱՊԵԹ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍԵԱՆԻ
(ELIZABETH ARSEN TOROSSIAN)**

(մահացած Իրաք)

հոգւոյն ի հանգիստ:



Տ. եւ Տիկ. Գեորգ եւ Թալին Քիւչիւքթաշճի,
Տ. եւ Տիկ. Լարա եւ Ռանի Պարուլթ,
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն իրենց
սիրեցեալ հօր եւ մեծ հօր`

**ՆՈՒՊԱՐ ՔԻԻԶԻԻՔԹԱՇՃԻԻ
(NUBAR KUCUKTASCI)**

մահուան 15-րդ տարելիցի յիշատակին:



Պրն. Արամ Մինասյան,
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրե
իր սիրեցեալ մօր՝

ԼԻԱՆԱ ՄԻՆԱՍԵԱՆԻ

(LIANA MINASYAN)

մահուան 40-ի յիշատակին:



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԱՂՈԹՔ

Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ,
գթա քո արարչական սիրովդ
ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:
Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:
Արա արժանի ողորմութեան քաւութեան
եւ թողութեան մեղաց:
Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո
յաջակողմեան դասուն:
Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.
դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:
Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:

ՅԻՇԱՏԱԿ ԱՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

**Մոնթրեալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար
Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC
Donations of April 2021 have been received with great appreciation**

CHURCH:

HOKEHANKISD

(Requiem Services)

IN MEMORY OF:

THE LATE HAROUTYUN

& SOURPUHI BALIAN:

Mr. & Mrs. Hrant & Lucy (Balian) Yegavian and children Jessie & Dalia

Mr. & Mrs. Bily & Helene Balian & daughter Eva

\$500

THE LATE VAHE KETLI

& SOPHIE BELGIN:

Mrs. Karmen Keli \$100

THE LATE ONNIK PILAFIAN:

Mrs. Anais Ohanessian \$50

THE LATE LIANA MINASYAN:

Mr. Aram Minasyan \$50

YUGHAKIN EASTER (OFFERING):

Dr. & Mrs. Nurhan & Ani Ecityan \$200

Mr. & Mrs. Boghos & Sirvart Kichian \$100

Mr. & Mrs. Martin & Sosie Marasliyan \$50

Mr. & Mrs. Arman Ozumit \$50

Mrs. Arpi Gould \$50

Mr. Mardiros Baygin \$50

Mrs. Elmas Kisa \$30

Mr. Martin Hazarian \$25

ՏՕՆԵՐ

ԿԱՐՄԻՐ ԿԻՐԱԿԻ

25 Ապրիլ 2021



Ս. Չատկի յաջորդող
կիրակիներէն ոմանք ունին
յատկանշական պատգամներ,
որոնք կը յայտնուին որոշ
գոյներով եւ սերտ կապ ունին
Քրիստոսի Յարութեան
իմաստին հետ: <<Կարմիր Կիրակին>>ն կը խորհրդանշէ Քրիստոսի
Ս. Յարութեան մահուան վրայ տարուած յաղթանակը:
Ժողովուրդներ կը տօնեն իրենց անկախութեան յիշատակը:

Այնպէս նաեւ Ս. Յարութեան տօնը քրիստոնէայ հաւատացեալին
համար մեղքի կապանքներէն, մահուան անէծքէն ազատագրուելու
եւ նորոգուած կեանքով դարձեալ Աստուծոյ ցոյց տուած
ճանապարհը մտնելու տօնն է:

Աշխարհի մեծամեծները տիրեցին երկիրներ եւ ուզեցին որ
խաղաղութիւն հաստատեն անոնց մէջ: Բայց ոչ մէկը Քրիստոսի
բերած խաղաղութիւնը չտուաւ անոնց: Քրիստոս թագաւորին
տուածը՝ խաղաղութիւնն ու երկինքի արքայութիւնն է: Քրիստոս
հրաշքներով, բարի գործերով եւ զօրութեամբ առաջնորդեց իր
ժողովուրդին: Ինքը միշտ արթուն էր իր փրկագործութեան
պատերազմը շահելու եւ մարդը ազատելու:

Արթուն մնալու համար հոգեւոր ուժի պէտք ունինք: Կեանքը հոգեւոր
պատերազմ մըն է: Պատերազմի ընթացքին անհրաժեշտ են ուժն ու
քաջութիւնը: Չարին մեծագոյն նպատակն է, ոչնչացնել այս ուժը,
խափանել քաջութիւնը ու հեռացնել Աստուծմէ մարդը եւ անհատը
գերի դարձնել իրեն:

Աստուած իր Որդիին միջոցաւ, Յարութեան յաղթանակով ի
մասնաւորի Հայ ժողովուրդին, եկեղեցիին, տուած է գիր ու
գրականութիւն, մշակոյթ, մարդկային ազնիւ օրէնքներ, որ այս
բոլորը դարձած են մեր հարստութիւնը:

Քրիստոսի տարած յաղթանակէն մեզի եկած հոգեւոր, ազգային, մշակութային, մարդկային, արժէքներով միասին, ինչքան կեանքի ապրելաձեւերը արդիականանայ ու խոչնդոտներ յառաջ բերէ մեր առջեւ, մեզ համար մահ չկայ: Որովհետեւ անմահ են այն արժէքները, որոնցմէ իր ուժը կը ստանայ հաւատացեալը, հայ ժողովուրդը:

Հայ ժողովուրդը, Հայրապետները, Հայոց մեծերը, Հայոց տունն ու եկեղեցին հաստատեցին ո՛չ թէ աւագի, այլ՝ ժայռի վրայ: Հայոց պատմութեան մէջ դարեր շարունակ եկան ու գացին փոթորիկներ, ծանր հովեր փչեցին եւ զարկին Հայոց տունն ու եկեղեցին, բայց չկործանուեցաւ, որովհետեւ ժայռի վրայ էր հաստատուած, այսինքն քրիստոսի տարած յարութեան յաղթանակին վրայ: Այ՛ո այս բոլորը պահելու համար արթուն մնալու եւ հոգեւոր ուժի պէտք ունինք: Իսկ մեզ յաղթական դուրս բերողը պիտի ըլլայ Քրիստոսանման քաջութիւն: Բոլորս կանչուած ենք, մեզի պարգեւած հոգեւոր զէնքերով բարի պատերազմը պատերազմելու ընդդէմ չարին յաղթելու:

Քրիստոսի մեզի բերած յաղթական տօնը մեր սրտերը, մեր մտքերը, մեր տուները օրհնէ: Ամէն:

Քրիստոս Յարեաւ Ի Մեռելոց:

HOLIDAYS

**RED SUNDAY –
APRIL 25, 2021**

In the Calendar of the Armenian Church, the third Sunday following the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ is known as Red Sunday.

The color “red” has been used throughout history to represent many things. One of the symbolic meanings is the blood of the martyrs who were sacrificed for Christ, His Holy Church, and their Christian faith. During the early years of Christianity, faithful followers of Jesus Christ were subjected to severe persecutions and torments. Many elected to die rather than betray their principles of life and faith, which the Incarnate God - Christ Jesus - had endowed to them and all of mankind.

The psalmist writes, “Precious in the sight of the Lord is the death of the saints” (Psalms 116:15).

Today, martyrdom is far less often an occurrence in the lives of Christians, yet it does happen. However, the greater struggle is the one against sin, which we can see manifested in many ways throughout the world. The battle against wickedness and evil, which will be victorious in the end, is the current expression of the significance of Red Sunday. The Apostle Paul writes that Christ Himself endured such opposition, that we should not grow weary in our battle against wickedness. In his letter to the Hebrews, Paul says: “In your struggle against sin, you have not yet resisted to the point of shedding your blood.” (Hebrews 12:4).

We are to use the opportunity of Red Sunday to once again remind ourselves of Paul’s exhortation to remain steadfast in the Lord, and to continue our daily labors of goodness and righteousness.



Ա. ԽՈՐԱՆԻ ԾԱՂԻԿՆԵՐ

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին Ա. Խորանին ծաղիկներ
նուիրել կրնան հեռաձայնել եկեղեցւոյս գրասենեակ (514) 279-3066:

FLOWERS FOR HOLY WEEK AND EASTER

Parishioners who wish to donate flowers for the Holy Altar
are asked to call the Church office (514) 279-3066.

Առցանց նուիրատուութիւններու համար հաճեցէք
սեղմել ներքոնշեալ կապը.-

For online donations please click the link below:

saintgregory.ca






ՈԳԵԿՈՂՈՒՄ
ՀԱՅՈՑ ՏԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
106-ԱՄԵՆԱԿԻՆ
ԵՒ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ 6-Դ ԱՄԵՆԱԿԻՆ
Առցանց - Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Պատարագ եւ Բարեխօսական Կարգ
Սրբոց Նահատակաց
La Sainte Messe et Service d'intercession
de nos Saints Martyrs



Շաբաթ, 24 Ապրիլ 2021
առաւօտեան ժամը 11:00-ին:
Samedi, le 24 Avril 2021 à 11h00.

Պատարագիչ՝
Արժ. Տ. Դավիթ Քինյ. Մարգարեան, Հոգեւոր Հովիւ
Célébrant: Rèv. P. David Margaryan, Prêtre Paroissial

Առցանց Նուիրատուութիւն Եկեղեցւոյ Կայքէջի միջոցաւ
Pour Dons en ligne - Web site: saintgregory.ca


615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 Tel.: (514) 279-3066
stgregorychurch@gmail.com

The 2021 Armenian Genocide Commemoration Organizing committee would like to invite all of you to an event honouring the victims of the Armenian genocide and all those fallen at the hands of Turkey. The event will start with a protest, silently standing in their memory, while sending a message to the Turkish government condemning their involvement in the 2020 Artsakh war. Around 3pm, we will gather at the Armenian Memorial for a ceremony and prayer service.

This event has been organized under the auspices of:

- His Eminence Bishop Abgar Hovakimyan, Primate of Diocese of the Armenian Apostolic Church of Canada.
- The Republic of Armenia to Canada Ambassador, H.E" Ms. Anahit Harutyunyan.

We will meet you at the corner of l'Acadie and Henri-Bourassa around 2:00 pm, on Saturday, April 24, 2021.



Armenian Genocide
Commemoration
Organizing Committee

**SILENT
PROTEST
& VIGIL**

April 24, 2021
2 PM Silent Protest
3 PM Vigil Ceremony

Armenian Memorial
Parc Marcellin-Wilson
Montréal, Qc.

2M DISTANCE - MASKS ARE MANDATORY
BRING YOUR ARMENIAN AND CANADIAN FLAGS
POSTERS WILL BE PROVIDED

#CondemnTurkey #StopTurkishAggression



ԱՄԵՆԱՄՍԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

f Առցանց – En direct/Live

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Շաբաթ, 24 Ապրիլ 2021

Ժամերգութիւն - Երեկոյեան ժամը՝ 5-ին:

**«Ուստի կը յայտարարեմ ձեզի. “Ի՛նչ որ կը խնդրէք աղօթքով,
հաւատացէ՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի”
(Ղուկ. 11:24):**

Samedi, le 24 Avril 2021

Office du soir à 17h00.

**“C'est pourquoi je vous dis : tout ce que vous demanderez en priant,
croyez que vous le recevrez, et il vous sera fait”
(Marc 11 :24).**



ՅՈՒՂԱՐԿԱԴՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԻ
ԵՒ ԹԱՂԱՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ԿԱՐԳԱԴՈՐՈՒՄ
THE ARRANGEMENTS OF THE BURIAL
& FUNERAL SERVICES



Մեր սիրելի հաւատացեալներուն կը փափաքինք
տեղեակ պահել թէ՝
յուղարկաւորութեան կարգի ծրագրաւորման եւ թաղման
ծառայութիւններու կարգաւորման համար համեստօրէն կը
խնդրուի

առաջին հերթին հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ, ուր
հանգուցեալի ընտանեկան պարագաներու յարմարութեան
իրավիճակին համաձայն պիտի կիրարկուին անրաժեշտ
միջոցները եւ Եկեղեցւոյ միջոցաւ ձեռք պիտի առնուին եւ
ուղղորդուին թաղման համապատասխան ծառայութեան:

Դիմեցէք մեզի հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝
(514) 279-3066



We would like to inform our faithful that:
to set up a burial and funeral service ,
it is highly requested **before any other arrangements** to call the
Church office, where the necessary arrangements will be made
according to the convenience of the family members of the
deceased, planning the church and the procedure of the funeral
services.

Contact us at (514) 279-3066

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 Tel.: (514) 279-3066
stgregorychurch@gmail.com



ՍՈՆԹՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՐԵՆՏԻՆԻԶ ԱՌԱՋԱՆՈՐԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաձայն Քէպէք նահանգի իշխանութեան, առողջապահական կառոյցներու յայտարարութեան եւ Գանատահայոց Թեմի հրահանգներուն՝ կանխարգիլելու համար թագաժահիրի Covid-19 տարածման վտանգը,

Ներկայիս սոր տնօրիններու համաձայն սկսեալ 3ինգշաբթի, 8 Ապրիլ 2021-էն կը կիրարկուի հետեւեալ համակարգը .-

- Յուղարկատրութիւններու պարագային **արտօսուած է առաւելագոյնը 25 հոգիի ներկայութիւն**, դիմակներու գործածութիւնը անհրաժեշտ է ամբողջ արարողութեան տեւողութեան ընթացքին, պահելով իրարմէ 2 մետր հեռաւորութիւն:
- Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Ս. Պատարագներուն, Ժամերգութիւններուն եւ մնացեալ արարողութիւններուն **առաւելագոյնը 25 հոգիի ներկայութիւն**:
Կարելի է հետեւիլ նաեւ՝

- առցանց Եկեղեցւոյ դիմատետրի էջով – Facebook Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Մնացեալ հարցերու համար կրնաք դիմել 3ոգետր 3ովիլին, հեռ. (514) 448-2809:

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

IMPORTANT NOTICE

We would like to inform our parishioners that following the Quebec State Authority, a statement from health care providers, and instructions from the Armenian Diocese of Canada to prevent the spread of Covid-19,

Starting on Thursday, April 8, 2021, the physical presence of parishioners in the Church according to the new guidelines will be as follows:

- **Up to 25 people are allowed** in the case of funerals, the use of masks is required throughout the ceremony, keeping 2 m distance from each other.
- Church Sunday Liturgies, prayer services, and other ceremonies the attendance **is allowed a maximum of 25 people.**

Sunday, Divine Liturgies – On Facebook Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

For other questions, you can contact
the Parish Priest tel. (514) 448-2809.

We wish you good health and all the best and hope to keep you informed in writing of any changes or other details.

CHURCH OFFICE



ՄՈՆԹՐԵԱԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ՏԱԾԱՐ
CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTREAL

Note Importante

Nous vous informons chers croyants que conformément aux directives du gouvernement du Québec, après la déclaration les autorités de santé publique et des instructions du diocèse de l'Église apostolique arménienne au Canada, pour empêcher la propagation du virus de Covid-19,

À partir du jeudi 8 avril 2021, la présence physique des fidèles dans l'Église selon les nouveaux directeurs actuels sera la suivante :

- **Jusqu'à 25 personnes sont autorisées** en cas de funérailles, l'utilisation de masques est obligatoire tout au long de la cérémonie, en gardant une distance de 2 m les uns des autres.
- Liturgies du dimanche de l'Église, services de prière et autres cérémonies, la participation maximale **est autorisée une capacité maximale de 25 personnes.**

Les St liturgies de dimanche, services et d'autres cérémonies de l'église peuvent être suivis en ligne sur la page Facebook de l'Église.

 **Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**

**Pour toutes autres questions, vous pouvez
contacter le prêtre au tel: (514) 448-2809**

Nous vous souhaitons surtout de bonne santé et le meilleur et espérons vous tenir informé par écrit de tout changement ou d'autres détails.

BUREAU DE L'ÉGLISE



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
ԵՒ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՂՈՅԶ



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Չորեքշաբթի, 28 Ապրիլ 2021
Երեկոյեան ժամը 5:00-ին:

Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի հետ:

SERVICE DU SOIR

avec le R.P. David Margaryan

Mercredi, le 28 Avril 2021 à 17h00.

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից
ըլլալու Երեկոյեան ժամերգութեան
առցանց Եկեղեցւոյ դիմատետրի էջով:

**Nous invitons nos chers fidèles à participer
à service du soir
via la page Facebook de l'Église.**

Աղօթաբոյր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ
հաւատացեալներուն:

Nous souhaitons des moments de prière à nos fidèles.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճար
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՀՈԳԵԻՈՐ ԶՐՈՅՑ

CONVERSATION SPIRITUELLE



Չորեքշաբթի, 28 Ապրիլ 2021

Երեկոյեան Ժամը 6:30-ին

Արժ. Տ. Դավիթ Զինյ. Մարգարեանի հետ:

Մեր սիրելի հաւատացեալները կրնան մասնակցիլ

Zoom ծրագիրի միջոցաւ:

Zoom ծրագիրի մասնակցութեան կապը ստանալու համար
հաճեցէք հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066:

Mercredi, Le 28 Avril 2021 à 18h30

avec le R.P. David Margaryan

Nous invitons nos chers fidèles peuvent participer
à travers le programme Zoom.

Pour obtenir le lien pour participer au programme Zoom
Veuillez appeler le bureau de l'Église au (514)279-3066.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՍԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՐԻ

Միքելի հաստացեալներ,
հաճոյքով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2